զնշանս ընդ այսմ առաքելով, մնամք առ Ձեզ
ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՈՂՈՐՄՈՒԹԵԱՄԲ բարեհաճ

ՆԻԿՈԼԱՅ։

Զքանշանաց Կանցլէր Կոմս ՖՐԵԴԵՐԻԿՍ

Ի Ցարսկոյ-Սելօ
յ8 Ապրիլի 1913 ամի
Նախարար Ներքին Գործոց
ՄԱԿԼԱԿՈՎ։

№ 27.

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹԻՒՆ ԱԶԳԻՍ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՏՆՕՐԷՆՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ

Կոնդակ Կովկասի Հայոց բարեգործական ընկերութեան անուանով, որով ընդունելով ընկերութեան հովանաւորող պատուաւոր անդամի կոչումը՝ օրհնեց ընկերութեան ազգօգուտ երկարամեայ գործունէութիւնը, բոլոր անդամներին և ճիւղերին։ 11 փետրուարի. թ. 288։

Կոնդակ ընդհանրական Վրաստանի Հայոց թեմի հայ ազգաբնակութեան ուղղած, որով օրհնելով նոցա՝ ծանուցուեց Մեսրոպ եպիսկոպոսի Առաջնորդ կարգուելը։ 12 փետրուար. թ. 298։

Դիւանի գրութեամբ ուղարկուեց Երևանի փոխ-թեմական Տ. Խորէն եպիսկոպոսին Նորին Սրբութեան սեպհականութիւնից Բիւրականի ծխական դպրոցին նուիրած մի հարիւր բուբլի նպաստը և յանձնարարուեց ուղարկել այդ նպաստը ծխական հոգաբարձութեան։ 13 փետրուարի. թ. 302։

Դիւանի գրութեամբ յանձնարարուեց Մայր Աթոռի տպարանի վարչութեան տալ Չինար գիւղի եկեղեցուն հարկաւոր եկեղեցական գրքեր։ 17 փետրուարի. թ. 317։

Դիւանի շրջաբերական գրութիւններով յանձնարարուեց Ռուսաստանի բոլոր թեմական առաջնորդներին զեկուցանել Նորին Սրբութեան՝ թեմերում դպրոցական ֆոնդի օգտին հանգանակուող դրամի քանակի և յանձնաժողովների գործունէութեան մասին։ 19 փետրուարի. թ. թ. 325—329։

Կոնդակ Ղարաբաղի թեմի ժամ. կառավարիչ Տ. Զաւէն վարդապետի անունով, որով թոյլատրուեց Հադրութ գիւղի հասարակութեան շինել ծխական դպրոց եկեղեցապատկան «Հին հանգստարան» կոչուած գետնի վրայ։ 23 փետրուարի. թ. 334։

Կոնդակ ս. Էջմիածնի Սինոդի անունով, որով ուղարկուեց պատշաճ տնօրէնութիւն անելու համար Ռոմանովների Տան թագաւորութեան 300-ամեայ յոբելեանի առթիւ հրատարակուած Բարձրագոյն Հրովարտակը։ 23 փետրուարի. թ. 347։

Կոնդակ ս. Էջմիածնի միաբան Տ. Աշոտ եպիսկոպոսի անունով, որով առաջադրուեց վարդապետական աստիճան տալ Կրասնովոդսկի Տ. Վահան աւագ քահանայ Տէր-Գրիգորեանցին։ 26 փետրուարի. թ. 356։

Կոնդակ Սինոդի անունով, որով առաջադրուեց արձակել Խորէն վարդապետ Լազարեանին ագարակի կառավարչի պաշտօնից և նորա տեղը կարգել Երնջակի վանքի միաբան տիրացու Արշակ Դաւթեանին, տալով վերջնոյս ամսական 30 րուբլի ռոճիկ։ 26 փետրուարի. թ. 357։

Կոնդակ ս. Էջմիածնի Սինոդի անունով, որով առաջադրուեց պահանջել Սանահնի վանքի եկամուտներից աւելցած գումարը և պահել Սինոդի գանձարանում նոյն վանքի նորոգութեան վրայ ծախսելու համար։ 26 փետրուարի. թ. 366։

Կոնդակ ս. Էջմիածնի Սինոդի անունով, որով առաջադրուեց նոր ձեռնադրուած Վահան վարդապետ Տէր-Գրիգորեանցին Տաթևի փոխանորդ և վանքի վանահայր կարգելու 26 փետրուարի. թ. 367։

Նորին Սրբութեան մակագրութեամբ պատասխուեց Մայր Տաճարի Լուսաբարձակին տալ Վրաստանի Առաջնորդ Տ. Մեսրոպ եպիսկոպոսին մի հատ շուրջառ Ռուսաստանի զուտ կտաւից, մի թաղ արտաքուստ կնիքով և մի եմիփորան։ 28 փետրուարի. թ. 371։

Կոնդակ ս. Էջմիածնի Սինոդի անունով, որով առաջադրուեց Տ. Վահան վարդապետ Տէր-Գրիգորեանցի անուն դուժել Տաթևի վիճակների շարքում։ 28 փետր. թ. 375։

Կոնդակներ Վրաստանի թեմի Առաջնորդ Տ. Մեսրոպ եպիսկոպոսի անունով, որոնցով թոյլ տրուեց Զարդախլու և Կոթ գիւղերում բանալ եկեղեցական-ծխական դպրոցներ։ 28 փետրուարի. թ. թ. 376 և 377։

Կոնդակ Գերաշնորհ Տ. Ցուսիկ Սրբազան Եպիսկոպոսի անունով, որով կարգուեց Մայր Տաճարի վերանորոգութեանց Յանձնաժողովի նախագահ։ 8 մարտի. թ. 399։

Կոնդակ ս. Էջմիածնի Սինոդի անունով, որով առաջադրուեց արձակել Տ. Խորէն վարդապետ Լաղարեանին վանական կառավարութեան անդամի պաշտօնից և նորա տեղը կարգել Տ. Վրթանէս աբեղայ Յակոբեանին։ 9 մարտի. թ. 400։

Նորին Սրբութեան մակագրութեամբ առաջադրուեց ս. Էջմիածնի ս. Սինոդին, համաձայն հանդուցեալ բժշկապետ Աղեքսանդր Տէր-Յարութիւնեանցի կտակի, վճարել նորա քոյր Նատալիա Տիգրանեանին հատանելի տարեկան 600 ռուբլի կանոնաւորութեամբ։ 9 մարտի. թ. 409։

Դիւանի գրութեամբ յանձնարարուեց Մայր Աթոռի տպարանի վարչութեան ուղարկել Երևանի փոխ-թեմակալի միջոցով Քէշտաղ գիւղի եկեղեցուն եկեղեցական գրքեր։ 9 մարտի. թ. 416։

Դիւանի գրութեամբ յանձնարարուեց Մայր Տաճարի լուսարարապետին ուղարկել Երևանի փոխ-թեմական միջոցով նոյն գիւղի եկեղեցուն եկեղեցական հին զգեստներ։ 9 Մարտի. թ. 417։

Նորին Սրբութեան մակագրութեամբ պատուիրուեց Մայր Տաճարի լուսարարապետին ուղարկել Երևանի փոխ-թեմական միջոցով Կարմիր—Խարաբա գիւղի եկեղեցուն եկեղեցական մի ձեռք հին զգեստ։ 12 Մարտի. թ. 423։

Նորին Սրբութեան մակագրութեամբ առաջադրուեց ս. Էջմիածնի Սինոդին կարգադրել տարեցոյց ապրիլի 7-ին Երևանի և Տփխիսի թեմերի քաղաքների Հայոց եկեղեցիներում խուլ և համրերի օգտին գանձանակ շրջեցնել և գոյացած գումարն ուղարկել ըստ պատկանելոյն։ 14 մարտի. թ. 426։

Նորին Սրբութեան մակագրութեամբ առաջադրուեց ս. Էջմիածնի ս. Սինոդին՝ Ղարաքիլիսի թեմի ժամ. կառավարչի միջնորդութեան համաձայն, ընդունել թեմական դպրոցի ուսուցիչ ճեմարանաւարտ Բիւզանդ Թորոսեանին կուսակրօն հոգևորականութեան շարքը և հանձնել Ամասիա վանքի միաբան, իբր ցանկութեան համաձայն։ 14 մարտի. թ. 436։

Դիւանի գրութեամբ յանձնարարուեց Տփխիսի Մարիամեան—Յովհաննեան օրիորդաց դպրոցի հոգաբարձութեան, համաձայն իւր խնդրի, նորից վերաքննութեան ենթարկել նոյն դպրոցի ծրագիրն և իրենց դիտողութիւններով հանդերձ ներկայացնել Նորին Վեհափառութեան։ 18 մարտի. թ. 453։

Դիւանի գրութիւններով առաջադրուեց Աստրախանի և Բեսարաբիայի թեմական առաջնորդներին կարգադրել, որ իրենց թեմերի հայ քահանաները կանոնաւորութեամբ կատարեն իրենց շրջաններում եղած հայ զինուորների բոլոր հոգևոր պէտքերը։ 18 մարտի. թ. թ. 454 և 455։

Կոնդակ ս. Էջմիածնի Սինոդի անունով, որով ուղար-

կուսից Ներքին Գործոց Տ. Նախարարի գրութեան պատճէնը, որով թոյլ է տալիս Նոր-Նախիջևանի—Բեսարաբիայի և Աստրախանի թեմերում Ցաջորդներ կարգել։ 18 մարտի. թ. 461։

Հանդակ Ս. Պետերբուրգի Տ. Գրիգոր աւագ քահանայի անունով, որով օրհնում է նորան 25-ամեայ գործունէութեան յոբելեանի առթիւ։ 18 մարտի. թ. 462։

Դիւանի գրութեամբ յանձնարարուեց Եւրոպայի Առաջնորդ Տ. Գէորգ արքեպիսկոպոսին գիտակ անձանց օգնութեամբ կազմել և ներկայացնել Նորին Սրբութեան Եւրոպայում ապրող բոլոր Հայերի մանրամասն ցուցակն ու վիճակագրական տեղեկութիւններ։ 22 մարտի. թ. 467։

Կոնդակ ս. Էջմիածնի Սինոդի անունով, որով ծանուցուց՝ Տ. Սահակ արքեպիսկոպոս Այվազեանի Մայր Տաճարի ժամօրհնող կարգուելը և առաջադրուեց տնօրինել նորա ռոճկի մասին։ 24 մարտի. թ. 471։

Կոնդակ նոյն Սահակ արքեպիսկոպոս Այվազեանի անունով, որով կարգուեց Մայր Տաճարի ժամօրհնող Գէորգ վարդապետ Ռշտունու փոխարէն, որ հիւանդութեան պատճառով արձակուեց այդ պաշտօնից։ 24 մարտի. թ. 474։

Դիւանի գրութեամբ վերադարձուեց Աբգար Գուլամիրեանին և թոյլատրուեց տպագրել նորա կազմած 1914 թ. օրացոյցի եկեղեցական մասը։ 25 մարտի. թ. 479.

Կոնդակ Ամերիկայի Հայոց Կենտրոնական Վարչութեան անունով, որով ծանուցուց Թէոդորոս քահ. Խաչատրեանի Լոսանջէլէսի հոգևոր հովիւ կարգուելու մասին։ 26 մարտի. թ. 484։

Դիւանի գրութեամբ յանձնարարուեց Մայր Տաճարի լուսարարապետին ուղարկել Երևանի փոխ-թեմակալի վիճակով Ահագէչի գիւղի եկեղեցուն եկեղեցական հին զգեստներ։ 28 մարտի. թ. 493։

Դիւանի գրութեամբ յանձնարարուեց Մայր Աթոռի տպարանի վարչութեան ուղարկել Երևանի փոխ-թեմակալի

միջոցով նոյն գիւղի եկեղեցուն եկեղեցական գրքեր: 28 մարտի. Թ. 496.

Դիւանի գրութեամբ յանձնարարուեց Երեւանի փոխ-թեմակալին յայտնել Մեղրիի ծխական դպրոցի ուսուցիչ Գէորգ Խարմանեանին Նորին Սրբութեան հետեւեալ մակագրութիւնը փոխ-թեմակալի յայտարարութեան վրայ. «Գոհունակութեամբ կարդալով Երեւանի գերապատիւ փոխ-թեմակալի յայտարարութիւնը ուսուցիչ պ. Գէորգ Խարմանեանի 25-ամեայ օգտաւէտ գործունէութեան մասին դպրոցական ասպարիզում, օրհնում ենք ուսուցիչ պ. Գէորգ Խարմանեանին ու նրա բեղմնաւոր վաստակը և մաղթում առողջ կեանք և եռանդ՝ այսուհետեւ եւս շարունակելու մատաղերամ մանկանց դաստիարակութեան վեհ գործը»: 29 մարտի. Թ. 504.

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ԵՒ ԳՈՀՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ

Կոնդակ օրհնութեան երդուեալ հաւատարմատար պ. Միքայէլ Պապաջանեանի անունով. 17 փետրուարի. Թ. 322.

Կոնդակ օրհնութեան երդուեալ հաւատարմատար պ. Յովհաննէս Սաղաթէլեանի անունով. 17 փետրուարի. Թ. 323.

Կոնդակ օրհնութեան և գոհունակութեան Ս. Պետերբուրգի Հայոց եկեղեցական պատուարժան խորհրդի անդամների անունով. 19 փետրուարի. Թ. 331.

Դիւանի գրութեամբ յայտնուեց Նորին Սրբութեան օրհնութիւնն ու գոհունակութիւնը Բագուի Տ. Գրիգոր աւագ քահանային իւր կազմած «Սիսակ Հայաստանի» մի օրինակը Վեհին նուիրաբերելու համար: 23 փետր. Թ. 336.

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՊԱՐԳԵՒԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

Կոնդակ Եւրոպայի Հայոց Առաջնորդ Տ. Գէորգ եպիսկոպոս Իւթուճեանի անունով, որով արքութեան պատիւ շնորհուեց: 20 մարտի. Թ. 463.